ՈՐՈՇՈՒՄ 33/44

Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին

14 մայիս 2015թ. գ. Բագրատաշեն

ՀՀ ՖՆ ԳՏՄ Բագրատաշենի մ/կ-ի պետ՝ Կարեն Գրիգորյանս ուսումնասիրելով քաղաքաց **Ռուսլան Զոհձեի** կողմից մաքսային կանոնների խախտում կատարելու վերաբերյալ նյութերը, **04.05.2015թ**-.ին կազմված թիվ **006203** արձանագրությունը և ՀՀ ՖՆ Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի թիվ 6/6-1/[819489]-15 առ 04.05.2015թ. գրությունը,

ՊԱՐԶԵՑԻ

Որ քաղաքացի **Ռուսլան Զոհձեն 27.03.2015թ.**ին, թիվ **F18216** հայտարարագրով ժամանակավոր ՀՀ տարածք է ներմուծել **«IVECO»** մակնիշի, **CCS455** պետհամարանիշի, 2006թ. արտադրության ավտոմեքենան վերաարտահանելու պայմանով:

Համաձայն ՀՀ ՖՆ Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի թիվ 6/6-1/[819489]-15 առ 04.05.2015թ. գրության **Ռուսլան Զոհձեն 27.03.2015թ**.-ի ժամը 23:27-ին Բագրատաշենի մաքսային, կետով այդ ավտոմեքենան արտահանել է ՀՀ մաքսային տարածքից, սակայն չի վերահայտարարագրել «վերաարտահանում» մաքսային ռեժիմով:

Նկատի ունենալով, որ քաղաքացի **Ռուսլան Զոհձեն** խախտել է ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածը, ղեկավարվելով ՀՀ վարչական օրենսգրքի 234 հոդվածով և ՀՀ մաքսային օրենսգրքի 221 հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

Քաղաքացի **Ռուսլան Զոհձեին** վարչական պատասխանատվության ենթարկել ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածի առաջին մասի առաջին կետով, նշանակելով տուգանք **հիսուն հազար** դրամի չափով:

Որոշման մասին հայտնել քաղաքացի **Ռուսլան Զոհձեին** պարզաբանելով, որ այն կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան, որոշումը կայացնելուց հետո 10-օրյա ժամկետում:

Ծանոթություն. Համաձայն ՀՀ ՎԻՎԻ 305 հոդվածի և ՄՕ 225 հոդվածի, պատասխանատվության ենթարկված անձը որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում պետք է վճարի տուգանքի գումարը, այն մաքսային մարմնին, որը կայացրել է որոշումը: Կամովին չվճարելու դեպքում տուգանքի գումարը կբռնագանձվի դատական կարգով:

Բագրատաշենի մ/կ-ի պետ՝ Կ. Գրիգորյան